


ԵՂԻՈՒ

Posted on November 25, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Խալաթյան, Երևան, 3 Նոյեմբեր 2021

«ԵՂԽՈՒԼ». տխուր քաղաքի երգիծական տառապանքները

Սեպտեմբերի 10-ին, երբ Keghart.org-ի հրավերով Էջմիածնում մասնակցում էի Հայաստանի և Սփյուռքի մի խումբ մտավորականների հանդիպմանը, բազմաթիվ հաճելի ծանոթություններով, հանդիպումներով, գրույցներով հագեցած երեկույթում անակնկալ մատուցվեց՝ ներկաներին նվիրվեց լիբանանահայ վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Հերյանի (Պետիկ Հերկելեան) գրական ժառանգությունն ամփոփող «Ընտրանի» ժողովածուն:^{*}

Ընթերցելով գիրքը, նախ՝ հպարտացա, որ հայ արդի գրական անդաստանի սփյուռքահայ հատվածում այսպիսի քերթող ունենք, ապա, արդեն որերորդ անգամ գլխահակ եղա այն իրողությունից, որ հայրենիքում ապրող գրականասեր ընթերցողների մեծ մասն անտեղյակ է ժամանակակից սփյուռքահայ գրականության կյանքին: Սա մեր ամենամեծ բացթողումն է, որն ուղղակիորեն բացասական է անդրադառնում հայոց գիր ու գրչության արդի տարեգրության ամբողջականության, միասնականության, հանրահռչակման կարևոր խնդիրների վրա: Սակայն, սա մեկ ուրիշ, մասնակցային մեծ շրջանում բանավիճելու կարոտ թեմա է, ուստի շտապեմ խոսել «Ընտրանու» մասին, ավելի ճիշտ՝ այդտեղ գետեղված «ԵՂԽՈՒԼ», որը երգծական վեպ լինելով՝ երգիծաբանիս ուշադրությունը սևեռեց իր վրա:

Վեպի լույս աշխարհի գալու մասին ավելի ճիշտ նկատառում չես կարող ասել, քան՝ «Ընտրանին» կազմող, խմբագրող և առաջաբանող Ալեքսանդր Թոփչյանն է գրել գրքի առաջաբանում, որպես երգիծավեպի ծննդյան ավետիս. «Պետք է ընդունել,-գրում է նա,- որ մեր գրականության արևմտահայ և սփյուռքահայ հատվածն արևելահայ հատվածից ավելի զորավոր եղավ երգիծանքի ասպարեզում: Բավական է հիշել Հակոբ Պարոնյանին, Երվանդ Օտյանին, «Միամիտի մը արկածների» Օննիկ Չիֆթե-Սարաֆին, «Հայ աղբրտիքի» Նշան Պեշիկթաշյանին, «Հարալեզներու դավաճանության» Շահան Շահնուրին, սփյուռքահայ իրականությունն իր «Արուարձան» ժողովածուում անգթորեն ծաղկող Վահե Օշականին, երգիծական անկրկնելի տարերքով հարստացված բանաստեղծությունների Չահրատին, աֆրիկյան ողբալի իրականությունը ներկայացնող, բայց փաստորեն արդի Հայաստանն ակնարկող «Փտախտը» վեպի հեղինակ Պողոս Գուբեյանին... Եվ այս փառահեղ ցուցակին, լիովին արդարացի ավելանում է ևս մեկ անուն՝ Պետրոս Հերյանն իր «ԵՂԽՈՒԼ»-ով»:

Եվ այսպես, «ԵՂԽՈՒԼ»: Քաղաքացիական պատերազմից տառապող Լիբանանում, անծանոթ մի մոլորակից, օդապարիկով, վայրէջք է կատարում մեկը, որին դիմավորող «բոլորն ալ կը զգային, որ եկողը այն ընտրեալն է, որ կարգ մը շինիչ ցուցմունքներու միջոցով պիտի յաջողի վերջ դնել իրենց յամեցող տառապանքին: Հետևաբար, բազմաթիւ ու բազմազան ցնցումներու եւ անթիւ յուսախաբութիւններու մատնուած

բազմութիւնը երկնոտ, այլ հաճելի անակնկալի մը սպասումով» գոչում է «ԵՂ-ԻՈՒԼ», որը և դառնում է նրա անունը: Երկնքից իջածը չի հապաղում տեղացիներին «շիկիչ ցուցմունքներ» և «հաճելի անակնկալներ» մատուցել և ներկայանալով որպէս կանանց ազատագրման շարժման ռահվիրա, զանազան հանդիպումներում, այցելություններում և ժողովատներում իգական և արական սեռերի ազատության և բամբասանքի մասին կրակոտ ճառերով ու թելադրանքներով բացահայտում է ոչ միայն իր՝ սանձարձակ, իգամուլ, սմտեղուկ եղբայրները, այլև իր համոզումներով խեղում է հանրության, հատկապէս՝ կանանց ավանդական բարքերը: Քաղքենիության ճահճում խրված հանրությունը Եղիուլի համար արգավանդ ասպարեզ է դառնում:

Դեպքերի հաջորդականությունը, գլխավոր և երկրորդական հերոսների կերպարներն ու նրանց գործողությունները, երկխոսությունները ներկայացվում են երգիծական ժանրի բոլոր հնարավորություններով՝ իրավունք տալով մեզ ասելու, որ բազմաշնորհ հեղինակը հայ երգիծական գրականության մեծերի՝ Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի ավանդույթների հետևորդներից մեկն է: Հատկապէս՝ Օտյանի, մանավանդ որ, ինքը՝ Հերյանը, վեպի հերոսի միջոցով դա է հուշում: Եղիուլն հիացած է ընկեր Փանջունու կերպարով և համոզված, որ «*իր գործով եւ եղբայամբ մեծ է Փանջունին*»: Այսկերպ, հեղինակն ասես ակնարկում է, որ իր Եղիուլն մեր ժամանակների յուրատեսակ մի Փանջունի է:

Վեպի թե՛ հեղինակային շարադրանքը և թե՛ հերոսների մտածումներն ու երկխոսությունները խոսքի կոմիզմի փայլուն նմուշներ են և, ինչպէս վայել է հմուտ երգիծաբանին, Հերյանը կարողացել է դրանց զուգակցել նաև դրության կոմիզմը:

Համաշխարհային երգիծական գրականության մեջ նման փայլուն զուգակցումներն են, որ պայմանավորում են բարձրարվեստ արհեստավարժությունը:

Ահավասիկ, ընթերցենք Հերյանին: Հեղինակային խոսքի կոմիզմ՝ «*Չուր չէ, որ մեր յարգելի դոկտորը Ս. Էջմիածնի հետ կը շփոթէր Կեդրոնական Դրամատունը, ամէն անգամ որ երկիւղածօրէն կ'անցներ անոր մօտէն*»:

Հեղինակային խոսքի և դրության կոմիզմ՝ «*Հակադիր կազմակերպութիւնները տեղ գրաւեցին դաշտին ամբողջ երկայնքին՝ դէմ-դիմաց: Այրերու խմբաւորումին մէջ նկատելի էին քանի մը արուսացած կիներ, իսկ կիներուն մէջ՝ կարգ մը իգականացած այրեր: Քաղաքապետարանի նուազախումբը հնչեցուց դարերէ ի վեր մոռցուած «Բամբասանք»ի քայլերգը, որուն ոգիի ձայնին անսալով հակադիր ճակատները ոտքի կանգնեցան՝ միանալով յարգանքի գաղափարին շուրջ*»:

Հերոսների խոսքի և դրության կոմիզմ՝

«-Լաւ. հիմա պատասխանէ նայիմ, դուն մա՞րդ ես, թե՛ ոչ:

Պահ մը մտածելէ ետք՝

-Մա՛րդ եմ,-բառաչեց Դերենիկ հաստատո:

-Այդպես ալ կը կարծեիք,- խորունկ շունչ առաւ Եղիոն:

-Շնորհակալ եմ,- յարգանքով գլուխը խոնարհեց Դերենիկ»:

Հեղինակի երգիծական գրչին հատուկ է զավեշտախաղը, այլ խոսքով ասած՝ ֆարսը: Բառախաղը, զավեշտական իրավիճակ և վերացական (աբսուրդի) զավեշտականություն ստեղծելը, կրկնության կոմիքսը, հեգնանքը Պետրոս Հերյանի երգիծավեպում տեղ-տեղ հանդես են գալիս միաժամանակ՝ կուռ ծաղրախաղի վերածելով պատումը: Նման դեպքերում, ակամա, հեղինակը համեմատության է մղվում Մոլիերան բարձրակարգ ոճին, երբ վերացական (աբսուրդը) ծիծաղելի է դառնում դիտողի (իմա՛, հեղինակի) արվեստով, նրա հումորի զգացումով, երբ վերացական (աբսուրդի) մեջ իրեն ճանաչելու կարողություն կա, կամ հեգնանք կա՝ իրեն ճանաչելու անկարողության վրա:

«Եղիոն» հյուսվել է գեղարվեստական պատկերավորման՝ կերպարի, ոճի, ժանրի հենքի վրա՝ ֆանտաստիկայի, հիպերբոլի, երևակայականի և իրականի, գեղեցիկի և տգեղի, ողբերգականի և կատակերգականի, ճշմարտացի և ծաղրանկարայինի արտառոց զուգորդմամբ ու հակադրությամբ:

Պետրոս Հերյանն իր գրոտեսկը հասցրել է սոցիալ-պատմական ընդհանրացման և կոնկրետության՝ նկարագրելով քաղաքացիական պատերազմում հայտնված Լիբանանի հայկական միջավայրը, որտեղ *«սառնամանիքը ոչնչով կրնար ազդել ալ բթացած զգայարաններուն վրայ տեղույն բնակիչներուն»* և ցինիկ, լկտի մի անձնավորության՝ երևակայական հերոսի գալուստն է պատճառ դառնում, որ նրանց հոգու ճահճացած ձևախեղումներն ի դերև ելնեն: Այսինքն, թե, մինչ այդ էլ խեղումները կային, բայց դրանց երևակման հրահրումն էր պակասում: Եղիոն այդ միջավայրի սկզբնաստեղծը չէ, այլ արտաերկրային նույատիպ մի միջավայրի ծնունդ է, որ երկիր է իջել որպես թե մեսիա: Եվ *«բթացած զգայարաններով»*, մոլորված հոտը գտնում է իր հովվին: Մեսիան, իր առաքելությունը կատարելով, համբառնում է՝ *«Մնաք բարով»*-ի բազմահազար թռուցիկներ ցրելով, որոնցում, եղերերգի հանգույն, արտահայտված են նրա տեսածն ու մտորումները և, հատկապես, ճշմարտացի մի եզրահանգում *«Մնաս բարով, Մայրիներու երկիր, որ մեծապետական քմծիծաղներու հրոյ ճարակ դարձուցիր մայրիներդ...»*:

Պետրոս Հերյանի գրական լեզուն վճիտ արևմտահայերենն է: Ընթերցելով նրա ստեղծագործությունները, ևս մեկ, բայց ոչ ավելորդ անգամ համոզվեցի, որ արևմտահայերենը շատ ավելի ճկուն, բազմախոս հնարավորություններ է ընձեռում հայ գրողին: Մանավանդ՝ երգիծանքի ժանրում, որում պատկերի, գործողության արագ անցումների, հակիրճագրության և պատկերավորության «ոլորաններում» արևմտահայերենն անզուգական է: Այդ զինանոցը շռայլորեն ծառայել է նրան:

Աներկբա է, որ հանձին «ԵՂԽՈՒ», հայ երգիծական գրականությունը ևս մեկ կորոզով զարդարվեց՝ տաղանդավոր երգիծաբանի դափնի շնորհելով բանաստեղծ, մանկավարժ և գրաքննադատ Պետրոս Հերյանին:

**Պետրոս Հերեան, «Ընտրանի», Երևան, 2020 թ., «Լուսաբաց հրատարակչատուն», Կազմեց, խմբագրեց և առաջաբանեց Ալեքսանդր Թովչյանը:*

There are no comments yet.